

ԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ
ՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՓՈՒԳՆԴԱՊԵՏ
ՂՈՒԿԱՍ
ՄԱԴՈՅԱՆ

ՀԱՅՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ



23486 Պարսպաճուռ,

Առձեպակ-Միսրաճուռ

մու. Ղուկասե Աս-

մու.

Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
Հ Ե Ր Ո Ս
ՂՈՒԿԱՍ ՄԱԴՈՅԱՆ



ՀՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատ. խմբագիր՝ Խ. ՄԱՄՋՅԱՆ

Ետպիկը՝ Սիմոն Մ. Ն. ՄԱՍԻՍ

Академия Наук Армянской ССР

Боевые подвиги сынов Армении

В. ПАРСАМЯН

ГЕРОЙ СОВЕТСКОГО СОЮЗА

ГУКАС МАДОЯН

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1944





Ղուկաս Մաղոյանը գերմանա-ֆաշիստական հորդանների դեմ մղվող Հայրենական մեծ պատերազմի կրակի բոցերի մեջ ծնված հերոսներից մեկն է:

Արևաշող Հայաստանի դավալենները, Սովետական մեծ Միության բոլոր մյուս ժողովուրդների հետ, հպարտությամբ ու խորին երախտագիտությամբ են տալիս նրա անունը:

Մաղոյանի անունը մտնում է մեր էպոխայի՝ Հայրենական մեծ պատերազմի էպոխայի երևիլի մարդկանց անունների շարքը, մարդիկ, որոնք Սովետական ժողովուրդների, ամբողջ քաղաքակիրթ մարդկության ազատության ու անկախության համար մղվող վճռական մարտերում անօրինակ քաջություն, արիություն ու խիզախություն ցուցաբերեցին և դրանով իսկ անթառամ փառքով պսակեցին իրենց անունները:

Ո՞վ է Ղուկաս Մադոյանը: Համառոտակի՝
ծանոթանանք նրա կյանքին ու գործու-
նեությանը:

Ղուկաս Կարապետի Մադոյանը ծնվել է
1906 թ. Կադգվանի շրջանի Քերս գյուղում,
հողագործի ընտանիքում:

Դեռ կյանք չմտած, պատանի Ղուկասը
ճաշակում է ժամանակակից կյանքի, դառ-
նությունները: Մորը կորցնում է մանուկ
հասակում, հորը, եղբորը և քրոջը՝ առա-
ջին իմպերիալիստական պատերազմի ժա-
մանակ՝ հայ ժողովրդի համար ստեղծված
կոշմարտյին տարիներին: Զրկված հարա-
զատներից, մայրական ու հայրական խնամ-
քից, անօգնական պատանին տարիներ շա-
րունակ անհեռանկար դեպքերում է Հայաստա-
նում ու Վրաստանում, մաքառում անիծյալ
կյանքի դժվարությունների դեմ, քանիցս
ուղղակի հրաշքով ազատվում մահվան
ճիւղաններից:

1917 թվականին, երբ նա ջրկիրություն
էր անում Թբիլիսիի հայկական ընտանիք-
ներում, ծանր հիվանդանում է բժավոր

տիֆուլ: Դառն է լինում որքի օրը առհասարակ: Պատկերացրեք, թե ինչ պետք է լիներ նրա վիճակը այդ ծանր հիվանդության ժամանակ, երբ նա խնամող և ոչ մի հարազատ չուներ:

Վեց ամսվա ծանր հիվանդությունից հետո Ղուկասը կրկին ոտքի է կանգնում: Ծանոթները զարմանում էին նրա այդ տեսակ դիմացկունության վրա: Ուլքեր նրան տեսել էին հիվանդ ժամանակ, անօգնական ընկած, չէին հավատում իրենց աչքերին, երբ կրկին տեսնում էին ծանր դուլերը ուսից կախ դցած, սովորականի պես համեստ ժպիտը դեմքին, ջուր կրելիս:

Հայրենիքի կարոտը Ղուկասին հանդիստ չի տալիս: 1919 թ. նա թողնում է Թբիլիսին և վերադառնում Կաղզվան: Այստեղ մի կարճ ժամանակ նա բատրակություն է անում, որից հետո կամավոր կերպով մըտնում է բանակի շարքերը:

Մադոյանը ակնատես էր եղել գերմանա-թյուրքական զավթիչների արշավանքի հետևանքով հայ ժողովրդի կրած կո-

րուստներին ու տառապանքներին, կորցրել էր իր հարազատներին: Հայրենիքի ազատութեան և հարազատների վրեժի նվաճական զգացմունքը նրան զենքի էր կոչում: Այդպիսի ազնիվ զգացմունքով էլ նա դիմում է բանակի շարքերը, տակավին չգիտակցելով, որ դաշնակցական բանակը կոչված չէր ծառայելու հայրենիքի ու ժողովրդի շահերին:

Կաղզվանում կանգնած էր հայկական գնդերից մեկը, երբ պատանին մտավ գնդի շտաբը և հայտնեց կամավոր դառնալու իր ցանկությունը: Շտաբի աշխատողները ծիծաղեցին նրա հանդգնութեան վրա և դուրս արին շտաբից: Մի քանի օր շարունակ նա համառորեն կրկնեց իր ցանկությունը և չհեռացավ զորամասից: Գնդում աշխատող ընդհատակյա բոլշևիկ գինվորականները նկատեցին ֆիզիկապես հյուծված, բայց վառվռուն դեմքով թխաչյա պատանուն: «Աչքաբաց տղա է, սրանից մարդ դուրս կգա» — ասում է գնդի բոլշևիկյան անլիզալ կազմակերպութեան ղեկավարը: Բոլշևիկ-

ների օգնութեամբ կատարուում է Ղուկասի ցանկությունը: Նա արդեն իսկ բանակի շարքերում էր և ղինվորական ծառայութեան հետ միաժամանակ կատարում էր բոլշևիկյան անլիզալ կազմակերպութեան հանձնարարութեանները:

Ավագ ընկերները Ղուկասին փաղաքշաբար «Ճուտիկ» էին կանչում: Այդ անունը բոլշևիկներն էին տվել նրան և այդպես էլ էր: Տարիքով նա ամենքից փոքրն էր, իսկ վտիտ ու նիհար մարմինը ղինվորական հագուստի մեջ հազիվ էր նշմարվում: Նրան սիրում ու փայփայում էին բոլորը:

Եվ այսպես, պատանեկութեան տարիներից սկսվում է Մադոյանի ղինվորական ու ռևոլյուցիոն գործունեութեանը:

Այստեղ, բանակի շարքերում, նա առաջին անգամ լսում է բոլշևիկյան խոսքը, Լենինի և Ստալինի անունները, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի մասին:

Բոլշևիկները նրան բացատրում են, թե ինչպես բոլոր մյուս փոքր ժողովուրդներին, այնպես էլ հայ ժողովրդին բախտը սեր-

տորեն կապված է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի, ռուս ժողովրդի բախտի հետ:

Բոլշևիկյան խոսքը նոր մտահորիզոններ է բացում Մադոյանի առաջ, նոր ուժ, նոր եռանդ ներշնչում նրան: Բոլշևիկյան խոսքը նրա սրտում վառում է հայրենասիրության անշեջ կրակը: Հայրենիքի ազատության ու անկախության գաղափարը մորմոքում է դառնություններով ու ցավներով լի նրա սիրտը: Հարազատների կործանից հետո նրա մռայլված դեմքին վերստին երևում է կենարար ժպիտը: Մադոյանն այլևս իրեն որք ու միայնակ չէր զգում, նա վեհ գաղափարների շուրջը համախմբված ռևոլուցիոն մեծ բանակի մի շինվոր էր, հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող մի մարտիկ:

Վրա է հասնում 1920 թվականի մայիսը: Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Բոլշևիկյան պարտիայի ղեկավարութեամբ, ոտքի են կանգնում դաշնակիների ու նրանց իմպերիալիստական տերերի լուծը տապա-

լիւր, Հայաստանում սովետական կարգեր հաստատուիլու: Հայաստանի քաղաքներում և գյուղերում ամենուրեք ծայր են առնում մասսայական ուղեւորներ շարժումներ: Ռեուլուցիայի ու կոնտրոլուցիայի այդ վըճական գոտեմարտերի ժամանակ Մադոյանին մենք տեսնում ենք ապստամբների շարքերում, սովետական կարգերի համար մարտնչողների բանակում:

1920 թվականի նոյեմբերին, ուսում մեծ ժողովրդի ու հերոսական Կարմիր Բանակի օգնութեամբ, հայ ժողովուրդն ազատագրւում է դաշնակների և իմպերիալիզմի լծից:

Ազատագրւած հայ ժողովուրդը եղբայրական օգնութեան ձեռք է մեկնում իմպերիալիզմի ու մենշևիկյան կառավարութեան լծի տակ տառապող վրաց ժողովրդին: Մադոյանը կամավոր մտնում է վրաց ժողովրդին օգնութեան գնացող հայկական առանձին ջոկատի շարքերը և 11-րդ բանակի ուսանական գորամասերի հետ մասնակցում վրաստանի ազատագրութեան հա-

մար մղվող կռիւներին: Այդպիսով, բոլորովին երիտասարդ հասակում նա ակնատես ու մասնակից է լինում երկու սովետական ռեսպուբլիկաների ստեղծմանը:

1921 թ. մայիսին Մադոյանը Լոռու 4-րդ դնդի հետ Թբիլիսից տեղափոխվում է Հայաստան և մասնակցում դաշնակցական ավանտյուրայի լիկվիդացիային՝ Ջանգիդուքում ու Մեղրիում: Քաղաքացիական կռիւների այս օրերին (1921 թ. հունիս) նա մտնում է բոլշեկյան պարտիայի շարքերը որպես թեկնածու:

Դաշնակիների ավանտյուրան լիկվիդացիայի ենթարկելուց հետո Մադոյանը տեղափոխվում է Դիլիջան և մինչև 1922 թ. վերջերը աշխատում 1-ին դնդում որպես դասակի կրտսեր հրամանատար:

1923 թ. վերջերին հրամանատարության որոշումով նա ուղարկվում է Երևան՝ Դիվիզիայի դպրոցում սովորելու:

Ուսման ծարավի Մադոյանը դպրոցում մեծ ջանասիրությամբ սովորում է ռազմական և մի քանի հանրակրթական առար-

կաներ: Մինչ այդ ինքնուրույն կերպով նա
կարողացել էր միայն գրաճանաչ դառնալ:

Դպրոցն ավարտելուց հետո նրան պահում
են տեղում և հանձնարարում կրտսեր հրա-
մանատարներ պատրաստելու գործը:

1924 թ. վերջերին Մադոյանը գիմում է
Հայկական 1-ին հրաձգային գնդի պարտի-
ական կադմակերպությանը թեկնածու-
թյունից անդամ փոխադրվելու: Նրա երաշ-
խավորներից մեկը այս կադակցությամբ
հետևյալն է գրում. «Ընկեր Մադոյան Դու-
կասին երաշխավորում եմ թեկնածությունից
անցնելու անդամության: Մադոյանին պա-
կասում է միայն լրիվ ֆադաֆական պատ-
րաստականությունը, բայց նու միանգամայն
նվիրված է կամկուսին, երբեք չի դավաճանի
նրան և ինչպես որ ֆադաֆացիական կռիվ-
ներին է ցույց տվել իր ջերմ մտանցու-
թյունը, նա այդ կանի և ապագայում»:¹

1925 թ. մայիսին Մադոյանը հիվանդու-

¹ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմու-
թյան ինստիտուտին կից Հայրենական պատերազմի
կարիներ ալբյում, գործ Դուկաս Մադոյանի:

Թյան պատճառով աղատվում է բանակից և մի քանի տարի շարունակ աշխատում է կոոպերացիայի ու հասարակական սննդի գծով: 1930 թվականին նա վերստին կանչվում է Կարմիր Բանակի շարքերը և մինչև 1933 թվականը ծառայում 1-ին Հայկական գնդում որպես դասակի հրամանատար: 1933 թ. ապրիլից նա տեղափոխվում է զինվորական առևտրի (վոյենտորգ) ասպարիզը և մինչև 1937 թ. աշխատում նախ որպես առևտրական բաժնի վարիչ, ապա գիրեկտոր: 1937—1940 թ. թ. աշխատում է Գլավգաստրոնոմում որպես արևմտական մասի գիրեկտոր:

1940 թ. փետրվարին Մադոյանը նորից կանչվում է բանակ: Նույն տարվա հունիսին նրան ուղարկում են Մոսկվա՝ վեցամսյա բարձրագույն զինվորական կուրսեր: Կուրսերն ավարտելուց հետո նա վերադառնում է Հայաստան և նշանակվում վաշտի հրամանատար:

1941 թ. հունիսի 22-ին ռադիոն հաղորդում է մեր հայրենիքի վրա գերմանա-ֆա-

շխատական զորքերի կատարած ավազակա-
յին հարձակման լուրը: Մեծ զորավար Ստա-
լինի կոչով սովետական ժողովուրդն արդա-
րացի, հայրենական պատերազմի էր ելնում
անարգ թշնամու դեմ: Մադոյանն անսահ-
ման տանելությամբ ու ցասումով է ընդու-
նում Գերմանիայի ուխտադրուժ այդ քայլը:
Նրա սիրտը լցվում է վրեժխնդրության
ազնիվ զգացմունքով: Նա իր զինվորների
առաջ երդվում է մինչև արյան վերջին
կաթիլը կովել հայրենիքի ազատության ու
անկախության համար, գերմանական լկտի
իմպերիալիստներին պատժելու համար:

Ահա այդպիսի նվիրական ցանկությամբ
էլ նա մտնում է Հայրենական մեծ պատե-
րազմի կրակի բոցերի մեջ:

1941 թվականի աշնանն էր. Մադոյանն
իր զորամասի հետ պաշտպանում էր Սո-
վետական Ուկրաինայի քաղաքներն ու
գյուղերը, անխնա ոչնչացնում գերմանա-
կան զավթիչներին: Կիևի, Պոլտավայի և
Դոնբասի համար մղված դաժան մարտե-
րում նա ընտելանում է ժառանգակից

պատերազմի ձևերին ու մեթոդներին, հարձակողական ու պաշտպանողական մարտերի հարուստ փորձ է ձեռք բերում, կոփվում այդ մարտերի բովուժ: Քաղաքացիական կոիֆների ու սոցիալիստական խաղաղ շինարարության տարիներին Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի շարքերում ձեռք բերած իր փորձը նա հարստացնում է ժամանակակից պատերազմի փորձով և այդպիսով դառնում ռազմական գործի կատարյալ վարպետ:

Հրամանատարությունը հաշվի առնելով Մադոյանի ալգորինակ կարողությունները, նրան հանձնարարում է ռազմաճակատի համար կրտսեր ու միջին հրամանատարական կադրեր պատրաստելու պատասխանատու գործը: Մադոյանը չէր ուզում բաժանվել իր մարտական ընկերներից, բայց հրամանը հրաման էր...

Գերմանա-Ֆաշիստական հորդաներն իրենց միլիոնավոր զինվորների դիակների վրայով ավելի ու ավելի էին խցկվում առաջ: Թշնամին մինչև ատամները զինված էր.

23786
8508
A
Թշնամին ուժեղ էր և նեղ. հեշտ չէր այդ-
պիսի Թշնամու դեմ կռվելը Մադոյանը
գիտակցում էր գործի ամբողջ պատաս-
խանատվությունը և այդ գիտակցությամբ
էլ դիմում է իր ստանձնած պարտականու-
թյունների կատարմանը: Երեք ամսվա ըն-
թացքում, պատերազմական ժամանակի տեմ-
պերով, նա պատրաստում և ռազմաճակատ
է ուղարկում դասակի ու վաշտի հարյուրա-
վոր երիտասարդ հրամանատարների: Դրանք
սոցիալիստական խաղաղ, ստեղծագործ աշ-
խատանքի տարբեր ասպարեզներից եկած,
մեծ մասամբ զենք չտեսած և զենք չգոր-
ծած, պատերազմի անսովոր մարդիկ էին,
որոնք, սակայն, «Մադոյանի դպրոցն» ա-
վարտելուց հետո դառնում էին զենքի վար-
պետներ, համարձակ կերպով մտնում էին
մարտի դաշտ և հմտորեն վարում գերմանա-
կան զավթիչների դեմ մղվող արյունահեղ
մարտերը:

1942 թ. ամռանը և աշնանը Թշնամին
սպառնում էր Ստալինգրադին: Քաղաքի
պատերի տակ տեղի էին տանում մեծա-



դույն պատմական ճակատամարտեր: Ստա-
լինգրադի պաշտպանությունը Գերագույն
Գլխավոր Հրամանատար Ստալինի, Սովետա-
կան ամբողջ ժողովրդի ուշադրության
կենտրոնում էր: Ամբողջ աշխարհը, մեր
բարեկամներն ու թշնամիները ուշի ուշով
հետևում էին Ստալինգրադի ճակատամար-
տերին: Ստալինգրադին վճռական դեր էր
վերապահված 1942 թվականի և հետագա
պատերազմական գործողությունների մեջ:

Ստալինգրադի և ամբողջ Սովետական
Միության համար ստեղծված այդ վճռական
օրերին ահա, հրամանատարության պահան-
ջով Մադոյանը տեղափոխվում է Ստալին-
գրադ:

Թնդանոթների որոտի, գնդացիների ու
ավտոմատների անվիրջ ճարձատյունի, օդա-
յին ավազակների ամենօրյա ռմբակոծու-
թյան տակ Մադոյանը շարունակում է իր
գործը: Ամիսներ շարունակ Ստալինգրադում
նա քուն ու դադար չունեի, անդուլ կեր-
պով սովորեցնում և թշնամու դեմ էր ու-
ղարկում ռազմական գործի նորանոր մաս-

հագեցածներ: Այդպես, վեց ամսվա ընթացքում նա պատրաստում է ավելի քան 220 հրամանատարներ, որոնք մասնակցում են Ստալինգրադի հերոսական պաշտպանությանը, գերմանական զորքերի շրջապատման ու ջախջախման Ստալինյան հանձարեղ պլանի իրագործմանը:

Հրամանատարական կադրեր պատրաստելու գործում ցույց տված իր եռանդուն և օրինակելի աշխատանքի համար բարձր հրամանատարության կողմից Մադոյանը երեք անգամ պարգևատրվում է և 27 անգամ շնորհակալության արժանանում:

Ստալինգրադի հերոսական պաշտպանությունից հետո, մեծ Ստալինի հրամանով 1942 թ. նոյեմբերի 19-ին Կարմիր Բանակն անցնում է հարձակման: Մադոյանն իր առանձին գումարտակով հարձակվող բանակների շարքերումն էր: Նոր էր ստանձնել նա 17 ազգի մարդկանցից կազմված այդ գումարտակի հրամանատարությունը: Տարբեր լեզուներով խոսող, տարբեր բնավորություններ ու սովորություններ ունե-

ցող մարտիկներին կազմակերպելու, դաս-
տիարակելու և մի կուռ մարտական միա-
վոր դարձնելու համար, նա չէր խնայել
ոչ իր հարուստ ուղմական գիտելիքներն
ու փորձը և ոչ էլ իր անսպառ ուժն ու
հռանդը: Հրամանատարի վարպետորեն կազ-
մակերպած ուսուցումը և մարտիկներին
նվիրված աշխատանքը տվել էին իրենց
փայլուն արդյունքները: Այդ արդյունք-
ները շատ շուտով հայտնի դարձան ամբողջ
ռազմաճակատին, երբ նրա բազմալեզու
գումարտակն առաջին իսկ ավանգարդային
մարտերում թշնամու հետ սկսեց խոսել մի
լեզվով՝ սովետական հաղթական զենքի
լեզվով: 28-րդ բանակի կազմում Մադոյանի
գումարտակը հռչակվում է որպես հաղթող-
ների գումարտակ: Նա նվաճում է բանա-
կի փոխանցիկ մարտական դրոշը և մինչև
վերջ պահում իր ձեռքում:

Ստալինգրադի հարավային սահմանները
գերմանական օկուպանտներից մաքրելուց
հետո, Մադոյանն իր գումարտակով մաս-

հակցում է կալմիկիայի քաղաքների ու գյուղերի աղատագրմանը:

Եվ այսպես, հաղթական կռիվներ մղելով թշնամու դեմ, նրա կենդանի ուժն ու տեխնիկան ոչնչացնելով և դեպի արևմուտք ետ շարտելով, 1943 թ. փետրվարի 5-ին Մադոյանը հասնում է Ռոստովի մոտ՝ Բատայսկ:

Հերոսական մարտերի փառահեղ ուղի էր անցել Մադոյանը Ստալինգրադից մինչև Ռոստով: Բայց ավելի հերոսական ու ավելի փառահեղ մարտերը դեռ առջևում էին:

Քանի՜ քանի անգամ այդ ճանապարհին նա վտանգի էր ենթարկվել, թշնամու տանկերի, հրանոթների, ականանետների, գընդացիրների ու ավտոմատների կրակի տակ ընկել և ամեն անգամ, կարծես մի հրաշքով, ազատվել, կենդանի մնացել: Ստալինգրադից մինչև Ռոստով թշնամու գնդակը երեք անգամ ծակել էր նրա մարմինը, բայց Մադոյանը ողջ էր մնացել: Բատայսկում Մադոյանից մեկ և կես մետր հեռավորության վրա պայթում է թշնամու 5⁰

կիրորդրամանոց մի ռումբ և հողի ու փողու հետ նրան օդ բարձրացնելով՝ նետում է ավելի քան 25 մետր հեռու։ Զինվորները վազում են իրենց սիրելի հրամանատարի կտորները հավաքելու և թաղելու։ Բայց հրաշք է թվում նրանց, երբ նրան գտնում են կենդանի, մի քանի տեղից միւսյն վերք ստացած։

— Ընկեր հրամանատար, մենք պատրաստվել էինք Ձեզ թաղելու, ուրախությունից կատակում է զինվորներից մեկը։

— Մեռնելու ժամանակ չէ, սպասեք Ռոստոֆը էլ գրավենք, հետո կթաղեք, կենսուրախ ժպտով պատասխանում է Մադոյանը և ձեռքը պարզում, որպեսզի բռնեն, ոտքի կանգնեցնեն իրեն։

Փետրվարի 7-ի գիշերը Մադոյանին կանչում են շտաբ։

— Ինչպե՞ս է Ձեր առողջությունը, հարցնում է հրամանատարը։

— Շատ լավ, պատասխանում է Մադոյանը։

Հրամանատարը Մադոյանին հանձնում է

մարտական հրաման.—Երկաթգծի աջ և ձախ կողմերով առաջ շարժվել, ճակատ առ ճակատ խփել, ոչնչացնել թշնամուն, լուսաբացին գրավել Ռոստովի կայարանը և սպասել նոր հրամանի:

Ծանոթանալով հրամանին, Մադոյանը խնդրում է հրամանատարից թույլ տալ խնդիրը կատարել, փոխելով հարվածի ուղղությունը:

«Ընկեր Մադոյան, արեք այնպես, ինչպես նպատակահարմար եք գտնում»,—պատասխանում է հրամանատարը, վստահ լինելով նրա ուժերի վրա:

Երկաթգծի ուղղությամբ թշնամին ուժեղ ամբողջություններ էր կառուցել. այդ ուղղությամբ կայարան մտնելը մեծ զոհեր կպահանջեր. Փորձված ու հնարագետ հրամանատարը որոշում է օգտվել գիշերվա մթնությունից, ձախից թևանցել թշնամու թիկունքը և հարվածը հասցնել թիկունքից: Այդպես էլ անում է:

Փետրվարի 8-ի լուսաբացին Մադոյանի գումարտակը համարձակ դրոհով վերցնում

է Ռոստովի կայաքանը: Հենց այդ ժամանակ պարզվում է, որ հարևան զորամասերը հանդիպելով թշնամու ուժեղ դիմադրությանը, չեն կարողացել ժամանակին կատարել իրենց խնդիրը և իրենք կտրվելով այդ զորամասերից, ընկել են պաշարված դրության մեջ:

Հարևան զորամասերի հետ մնալով, Մադոյանի գումարտակի համար ստեղծվում էր կրիտիկական դրություն: Բայց այդ բնավ չի շփոթեցնում բոլշևիկ հրամանատարին: Բոլշևիկյան պարտիան, հերոսական կարմիր Բանակը նրա մեջ կռել ու կոփել էին տոկունություն և կայունություն: Նա վճռում է շարունակել կռիվը մինչև օգնություն ստանալը: Եվ այդպես, սկսվում են Մադոյանի մի բուռն քաջերի վեցօրյա հերոսամարտերը թշնամու գերազանց ուժերի դեմ:

Փետրվարի 8-ին գերմանական ավելի քան 200 տվտոմատավորներ յոթ տանկերի օգնությամբ հարձակվում են Մադոյանի զորամասի վրա: Մադոյանի խի-

զախները ոչնչացնելով մի քանի տանկ և 130 էսէսականներ, ետ են մղում թշնամու գրոհը, գրավում են Էնդելսի ու Բուդյոննու փողոցների վրա եղած կարևոր շենքերը։ Այդ օրը մինչև կես գիշեր կատաղի մարտերը չեն դադարում։ Գերմանացիները թարմ ուժեր բերելով՝ ութ անգամ կըրկնում են իրենց գրոհները, բայց ոչ մի արդյունքի չեն հասնում։

Փետրվարի 9-ի վաղ առավոտյան գերմանացիները տանկերով, հրանոթներով, ականանետներով, գնդացիրներով և ավտոմատներով զինված խոշոր ուժեր են կենտրոնացնում Մադոյանի դեմ։ Նրանց հրամայված էր ինչ գնով էլ որ լինի ոչնչացնել Մադոյանի զորաբաժինը և վերացնել իրենց թիկունքը խրված այդ սեպը։

Մադոյանին հայտնի էր թշնամու մտադրութունը։ Նա արագությամբ ուժեղացնում է հակառակորդի հարձակման հնարավոր ուղիները փակող իր կրակային կետերը և սպասում հանդիպման։ Լուսաբացին երևում են գերմանական տանկերը,

նրանց հտեից գալիս է հետևակը: Նորից բորբոքվում են փողոցային կատաղի մարտերը: Գերմանացիներն ամեն կերպ աշխատում են խցկվել կայարան, բայց Մադոյանի քաջերը կայարանի դռներն ամուր փակել էին նրանց առաջ:

Մադոյանի մի բուռն խիզախների հերոսական դիմադրությունը ջղայնացնում է գերմանական հրամանատարությանը: Առավոտից մինչև ուշ երեկո նրանք իրար հետևից 23 գրոհ են կազմակերպում կայարանի վրա, բայց սովետական հայրենասերները մնում են անդրդվելի:

Փետրվարի 10-ի ամբողջ օրը կռիվները շարունակվում են: Այդ օրը Մադոյանի մարտիկները հտ են մղում 20 գրոհ, խփում են 3 տանկ և ոչնչացնում ավելի քան 100 զինվոր ու սպա:

Փետրվարի 11-ին գաղաղած թշնամին հրձիգ ուժեր է նետում կայարանի ու շրջակա շենքերի վրա: Բռնկվում են հրդեհներ: Կրակի բոցերն սկսում են լափել Մադոյանի մարտիկներին: Տիրսից բռնամու

տանկերը, հրանոթները, վեցփողանի ականա-
նետները, զնդացիներն ու ավտոմատներն
էին գործում, օդից մեսսեր շփողները, իսկ
ներսից կրակը,—պատմում է Մադոյանը:
Այլևս ամենաբին էր մնալ հին դիրքերում:
Նքե բեռամին ոչինչ անել չկարողանալ, և
չէր էլ կտրող, միևնույն է, կրակը մեզ
կլափեր: Բացի այդ, ռազմամթերքն էլ սպառ-
վելու վրա էր, ամհրաժեշտ էր ուժերը
կենտրոնացնել:¹

Փետրվարի 11—12-ի գիշերը Մադոյանն
իր մոտ է կանչում հրամանատարներին,
բացատրում է ստեղծված իրադրությունը
և հրամայում է նոր դիրքեր բռնել կայա-
րանին մոտիկ, հրդեհից ազատ մնացած
շենքերում:

Հրամանատարներից մեկը հարցնում է՝
ի՞նչպես անցնել նոր դիրքեր, երբ միակ
ճանապարհը կրակով է պատած:

1 1943 թ. օգոստոսի 8-ին և 10-ին նրանում
Մադոյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ, իմ
խնդրանոթ, նա պատմեց, և ես գրի առա նրա հիշո-
ղությունները: Մադոյանի վերոհիշյալ և հետագա
խոսքերը բերում ենք այդ հիշողություններից:

—Կրակի միջով, պատասխանում է Մադոյանը և հրամայում անմիջապես անցնել գործնական աշխատանքի։ Այդ գիշեր Մադոյանի կտրիճներն ամբողջ ժամանակ մաքառում էին կրակի դեմ։ Դա մի անմոռանալի գիշեր էր նրանց կյանքում։ Այդ չի մոռացվի և Հայրենական պատերազմի պատմության մեջ։ Այդ գիշեր նրանք կազմակերպված ձևով տեղափոխվում են նոր դիրքեր, իրենց հետ տանելով ռազմամթերքի ու պարենամթերքի մնացած աղքատիկ պաշարները և 80 հոգի վիրավորներ։

Թշնամու ջանքերը՝ կրակի ճարակ դարձնելու Մադոյանի խիզախներին, նորից ապարդյուն են անցնում։

Մադոյանը ժամանակին և վարպետորեն գուլրս է բերում զորամասը կրակի բոցերից և այնքան լավ ամրանում նոր դիրքերում, որ փետրվարի 12-ին և 13-ին Թշնամին անընդհատ գրոհներով չի կարողանում նույնիսկ նրա մի զինվորի քիթն արնոտել։

Իսկ իրենք այդ օրերին նորից գետին են փռում տասնյակ ֆաշիստների:

Փետրվարի 13-ին, երբ ռազմաժխերքը բոլորովին սպառվել էր, Մադոյանը հրամայում է. «Թշնամու զենքերով խփել քեռամուն»: Եվ պետք էր տեսնել, թե ինչպես նրա կտրիճները մթության մեջ անսպասելի հարձակումներ գործելով ֆրիցների վրա, խլում էին նրանց զենքերը և այդ նույն զենքերով ոչնչացնում նրանց:

Կապիտան Ինկաևի ստորաբաժանման մարտիկները փողոցներում, տներում ձեռնամարտի էին բռնվում գերմանական ավտոմատավորների հետ, ոչնչացնում էին նրանց, վերցնում ավտոմատներն ու փամփուշտները և վերադառնում զորամաս:

Լեյտենանտ Լուպանդինի հետախույզները հակառակորդից խլած զենքերով միայն մի օրում ոչնչացնում են 35 ֆաշիստ: Այդ նույն ձևով թշնամուն խփում էին Լեյտենանտ Շիրովի գնդացրորդները, սերժանտ Կվարչինկոյի զրոհիչ խմբի մարտիկները և ուրիշները:

Զորամասի ագիտատոր, Լենինգրադի՝
Ռեկոլուցիայի Թանգարանի նախկին ղերեկ-
տոր Շուգենկոն „В боях за родину“
մարտական Թերթուլ սխտեմատիկաբար
լուսաբանում էր հերոսների սխրագործու-
թյունները և դրանով իսկ նոր լիցք տալիս
նրանց։

Այդպես էին մարտնչում Մադոյանի խի-
զախները գերմանական զավթիչների դեմ
Ռոստովում։

Մարտիկները ուղմամթերքից ավելի նեղ-
վում էին հացի ու ջրի պակասությունից։
Սանիտարուհի Լիզայի միջոցով մոտակա
բնակիչներից գաղտնի կերպով ստացվող
աննգամթերքը Մադոյանը բաշխում էր
հիվանդներին ու վիրավորներին։ Մարտիկ-
ները բառացիորեն քաղցած ու ծարավ էին
անց կացնում իրենց օրը, իսկ դա ամենից
ավելի էր ազդում հրամանատարի վրա։

«Հրամանատարի սիրտը տափ պետք է լինի,
իսկ զլուխը՝ սառը», — ասում էր Մադոյա-
նը իր հրամանատարներին։ Ծիշտ այդ-
պիսին էր հենց ինքը։ Նա մտնում էր

յուրաքանչյուր զինվորի դրության մեջ,
բայց միաժամանակ շատ խստապահանջ էր,
վախկոտների նկատմամբ անողոք: Մար-
տերից հետո (իսկ դրանք, որպես կանոն,
սկսվում էին վաղ առավոտից և դադարում
ուշ գիշերին) Մադոյանը քուն ու հանգիստ
չունեի: Այցելում էր զինվորներին ու հրա-
մանատարներին, ծանոթանում նրանց կա-
րիքներին, խրախուսիչ խոսքեր ասում.
«Չհուսահատվե՛ք, դիմացե՛ք, շուտով օգնու-
թյուն կստանանք, հաղթանակը մե՛րը կլի՛ի», —
ասում էր Մադոյանը իր զինվորներին,
իսկ նրանք սովորաբար պատասխանում
էին՝ «Մադոյանը մեզ հետ է, մենք կհաղթենք»:

Եվ իրոք նրանք հաղթեցին:

Մադոյանի մի բուռն քաջերը վեց օր ան-
ընդհատ անհավասար մարտեր մղեցին
թշնամու զերազանց ուժերի դեմ, գերմա-
նական տանկերի, հրանոթների, ականա-
նետների, ավտոմատների մոտ 100 զրոհ հո-
մակցին, մեծ քանակությամբ ռազմական
տեխնիկա և մի քանի հարյուր ֆաշիստ
ոչնչացրին, իրենք մնալով անդրդվելի: Դա

իրոք մեծ հաղթանակ էր, հերոսության
ու փառքի արժանի գործ:

Կապիտան Դ. Վլադիմիրովը ռազմաճա-
կատի թերթերից մեկում, խոսելով Մադոյա-
նի զորամասի և զերմանական տանկերի
միջև Ռոստովում տեղի ունեցած գոտեմար-
տերի մասին, գրում է.

«Ուլ եղել է մարտում, նա գիտե, թե ինչ
է նշանակում թշնամու տանկերի գրոհը՝
ականանետային, զնդացրային ու ավտոմա-
տային կրակի պաշտպանությամբ»:

Այո, հայ ժողովրդի անվեհեր զավակը
6 օրվա ընթացքում մոտ 100 անգամ
այդպիսի գրոհի ենթարկվեց, բայց և ան-
սասան մնաց, անթառամ փառքով պսակեց
իր անունը:

«Հայրենական պատերազմի պատմության
պայծառ էջերից մեկում կպատմվի,—գրում
է հակատային թերթի թղթակից Յուրի
Միխայիլովիչ Յանոպոլսկին,—քե ինչպես

Մադոյանն առաջինը մտավ Ռոստով և դիմացով այնտեղ»¹

1943 թ. փետրվարի 14-ին Կարմիր Բանակի զորամասերը վճռական գրոհով ձեղքում են թշնամու օղակը և միանում Մադոյանի գումարտակին։ Նույն օրը թըշնամին դուրս է շարտվում Ռոստովից։ Կովկասի բանակին վերստին անցնում է մեր ձեռքը։

Սովետական Միության Գերագույն Սովետը բարձր գնահատելով Ռոստովի ազատագրության համար մղված մարտերում Մադոյանի ցուցաբերած խիզախությունն ու հերոսությունը, 1943 թ. մարտի 31-ի Հրամանագրով նրան շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։

Սովետական Միության Հերոսների ընտանիքում ամելանում է մի նոր անուն՝

¹ «Сталинское знамя», ежедневная фронтовая красноармейская газета, № 82, от 4 апреля 1943 года.

հայ ժողովրդի պանծալի զավակ Ղուկաս
Մադոյանի անուանը:

Մադոյանի մարտական ընկերները, ֆա-
շիստական գերությունից աղատագրված
Ռոստովի բնակիչները, արևաշող Հայաս-
տանից՝ հարադատներն ու ընկերները շնոր-
հավորում են կառավարական բարձր պար-
զեր: Մադոյանը, ինչպես միշտ, իր պատաս-
խան նամակներում համեստորեն գրում է,
«ես ավելի ոչինչ չեմ արել, ես իմ սրբազան
պարտքն եմ կատարել հայրենիքիս հանդեպ»:
Այս տեսակետից վերին աստիճանի ուշա-
գրավ են ընտանիքին գրած նամակները:
Ահա կնոջը գրած նամակներից մեկը:

«Բարև, Սիրուշ ջան».

Վերջապես վեց ամսից հետո ստացա
ձեզանից միանգամից 8 նամակ. նամակ-
ներն ստացա պատերազմի ամենաեռուն ժա-
մանակ. թնդանոթների ու գնդացիների
կրակի տակ կարգացի բոլոր նամակները:
Շատ ուրախ եմ, որ լավ եք...

Սիրուշ ջան, Սերյոժայիս և Ժենիկիս
նակազը կատարված է. այդ ժամանակա-

միջոցին ոչնչացրել եմ մոտ 400 ֆաշիստ:

Ներկայումս ողջ և առողջ պայքարում եմ գարշելի հափշտակիչների դեմ, աղատելով մեր հարազատ հողը: Երևի մինչև այս նամակիս ստանալը կլսես իմ մասին, որ ինձ ներկայացրել են Սովետական Միության Հերոսի կոչման:

Այնպես որ տուն վերադառնալուց ինձ համար չեք ամաչի:

Փետրվարի 22-ին աղջկանը գրում է.

«Բարե, իմ թանկագին բալիկ ջան.

Ստացա ձեզանից մի քանի նամակ, որոնց մեջ նաև քո նամակը: Բալիկ ջան, կարգացի նամակդ, շատ ուրախ եմ, որ լավ ես, գերազանց ես սովորում: Եղի՞ր այդպես խելոք, իմ պարծանք, աչքիս լույս: Բալիկ ջան, քո ամեն մի նամակը ստանալուց ուրախությունից հարբում եմ ու քաջանում: Բալիկ ջան, դու գրում ես, որ կարոտել ես. ես էլ շատ եմ կարոտել, բայց չէ՞ որ հարկավոր է կռվել, շուտ վերջ տալ սրիկաներին, այն ժամանակ հաղթանակով տուն կվերադառնամ: Ոգևորվելով ձեր

Նամակներով, ես ջարդում եմ թշնամուն,
որի համար կառավարության կողմից պար-
գեատրվել եմ 4 շքանշանով: Եվ կջարդեմ
նրանց մինչև մեր երկրից հեռանան: Ժե-
նիկ ջան, ես ձեր պատիվը բարձր կպահեմ,
դուք էլ ինձ ամոթով չանեք:

Առաջժամ այսքան:

Պինդ համբուրում եմ, իմ անդին բալիկ:
Նամակը գրել եմ տարբեր օրեր՝ ժամանակ
չունենալու պատճառով:

Քո պապա Ղուկաս:

Ինչպես տեսնում ենք, Մադոյանը համես-
տությամբ խոսում է հայրենիքի հանդեպ
իր պարտքը կատարելու, ընտանիքի ան-
դամներին ամոթով չթողնելու մասին և
լուրմ, ոչ մի խոսք չի ասում իր կատա-
րած հերոսությունների մասին: Իր արիու-
թյամբ ու քաջությամբ Մադոյանը նվա-
ճում է ընդհանուրի հարգանքը, դառնում
է հրամանատարների, քաղաշխատողների ու
մարտիկների սիրելին:

«Ղուկաս Կարապետովիչը, որպես մեր

հայրենիքի իսկական պատրիոտ և բուշակ-
կյան պարտիայի հավատարիմ գավակ, իր
մարտական գործերով ընդհանուր համա-
կրանք և հարգանք է նվաճել մեր գործադու
բոլոր մարտիկների ու հրամանատարների
կողմից»,—գրում է իր մի նամակում զորա-
մասի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Փոս-
տովեյը:

Այո, Մադոյանը սոսկ հրամանատար
չէր այդ բառի նեղ իմաստով: Նա իր զո-
րամասի հայրն էր, նրա դաստիարակը,
նրան մարտական ոգի ներշնչողը: Այդ է
պատճառը, որ երբ հրամանատարությունը
որոշում է Մադոյանին ուղարկել Մոսկվա՝
Ֆրունզեի անվան զինվորական Ակադե-
միան, իր թեորհտիկական կրթության պա-
կասը լրացնելու, նրա զինվորներն ու հրա-
մանատարները արցունքը աչքերին են ճա-
նապարհ դրում իրենց սիրելի հրամանա-
տարին: Մադոյանի համար էլ հեշտ չէր
բաժանվել իր մարտական ընկերներից:
«Սովորելը դժվար է, կովելը՝ հեշտ»,—ասում
է նա իր հրամանատարին և խնդրում է

Թույլ տալ շարունակել կռիվը, բայց ինչ
կարող էին անել, հրամանը հրաման էր։...

Մադոյանը բաժանվում է իր զորամասից,
բայց նրա մարտիկներն ու հրամանատար-
ներն աչքի լույսի պես են պահում ու գոր-
ծադրում նրա մարտական տրադիցիաները։
Հրամանատարները մարտիկներին հաճախ
են հիշեցնում Մադոյանի խոսքերը՝ «Պա-
տերազմում չկա խաղաղ բռնություն։ Ով հավա-
տաց լուրջան, կխաբվի։ Արյունով են
վնասում այստեղ վստահության համար»։

Ավագ լեյտենանտ Օխապինի ասելով,
Մադոյանի այս խոսքերը, նրա գնալուց
հետո էլ, միշտ հնչել են իր ախանջին և
զգաստ պահել իրեն ու իր զորամասին։

Ականատիաների վկայությամբ, Մադոյա-
նի հեռանալուց հետո, չի եղել մի դեպք,
որ նրա նախկին մարտիկները թշնամու
դեմ գնալուց առաջ չհերզվեին՝ «Կովել, ինչ-
պես Մադոյանի հետ միասին եինք կռվում»։

Հայ ժողովրդի հերոս զավակի անունը,
նրա մարտական սխրագործությունները
շուտով հայտնի դարձան ամբողջ աշխար-

հին: Մեր դաշնակից Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարութեան պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտը ըստ արժանւոյն գնահատելով ընդհանուր թշնամու, հիտլերյան Գերմանիայի դեմ Մադոյանի մղած պայքարը, պարգևատրեց նրան «Մարտական ծառայութեան» համար» ոսկե մեդալով:

Երևույթը հատկանշական էր: Հայ ժողովուրդը մի նոր ապացույց էր ձեռք բերում ամբողջ աշխարհի խաղաղասեր մարդկութեան, համաշխարհային քաղաքականութեան ընդհանուր բնամտ՝ հիտլերյան ռեպրեսիայի դեմ մղվող պայքարում իր ունեցած մասնակցութեան մասին:

1943 թ. օգոստոսին հայ ժողովուրդը իր մոտ է հրավիրում իր հերոս զավակին: Մադոյանը մի քանի օրով այցելում է Հայաստան՝ հանդիպումներ է ունենում Երևւմանի, Լենինականի բանվոր-ծառայողների և Հոկտեմբերյանի, Վաղարշապատի, Ղաթաբաղի ու Սիսիանի կոլտնտեսականների հետ: Նա իր ժողովրդի առաջ բաց ճակատով հաշիվ է տալիս, թե ինչպես է

կատարել իր սրբազան պարտքը հայրենիքի հանդեպ, ինչպիսի ատելությամբ է ոչնչացրել հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներին՝ գերմանական գազազած իմպերիալիստներին: Ժողովուրդը ամենուրեք ցընծությամբ է ընդունում հայրենիքի ղավակին և երախտագիտությամբ նշում նրա հերոսական գործերը:

Երևանի աշխատավորության հետ ունեցած իր հանդիպումներից մեկում Մադոյանը պատասխանելով ելույթ ունեցողներին, ասում է.

«Ընկերներ, դուք շատ եմ բաձրացնում իմ կատարած գործը: Ես կատարել եմ միայն ու միայն սրբազան պարտքս իմ հայրենիքի և իմ ժողովրդի հանդեպ, այն էլ ոչ լրիվ, քանի որ թեմամին դեռ վերջնականապես չի ջախջախված և մեր հողից չի մաքրված: Ինչպես յուրաքանչյուր սովետական քաղաքացու, այնպես էլ իմ պարտքն է՝ կռվել քշնամու դեմ մինչև նրա վերջնական ջախջախումը: Ես, ինչպես միշտ, այսուհետև ևս պատրաստ եմ իմ բոլոր ուժերը, եթե հարկ

լիցի նաև կյանքս, նվիրաբերել մեր հայրենիքի ազատութեան ու անկախութեան գործին»:

Հերոսի հայրենասիրական խոսքերը նոր լիցք են տալիս թիկունքի աշխատավորներին: Նրանք խոստանում են է՛լ ավելի ուժեղացնել օգնութեանը ճակատին և ճակատայինների ընտանիքներին:

Կարճատև հանդիպումից հետո Մադոյանը վերադառնում է Մոսկվա, իր հետ տանելով հայ ժողովրդի սերն ու հարգանքը: Իսկ Հայաստանի լեռներում ու դաշտերում ժողովուրդը երգում է նրա գովքը:

Հայ ժողովուրդը երախտագետ ժողովուրդ է: Նա գիտե ոչ միայն հերոսներ ծնել, այլև հավերժ պահել իր հերոսների փառքը:

Ղուկաս Մադոյանի անունը, Հայրենական մեծ պատերազմի ճակատներում հայ ժողովրդի մարտնչող այլ հերոս դավակների անվան հետ ոսկե տառերով կգրվի Հայրենական մեծ պատերազմի պատմութեան մեջ: Նրա հերոսական կերպարը դալիք սերունդների համար կլինի որպես

Ժի հուշարձան՝ հայ ժողովրդի հերոսական
այն պայքարի, որ նա մեծ զորավար
մարշալ Ստալինի գլխավորությամբ մղել է
Հայրենական պատերազմի անդ օրերին:



ՎՁ 00614 պատվեր 10. հրատ, 209. տիրաժ 4000.

1,5 տպ. մամուլ, մամուլում 29720 տպ. նիշ:

Մտորագրված է տպագրության 12/VI 1944 թ.

ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի 1-ին տպարան, Երևան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045513

[124.]

ԳԻՆԷ 3 ՌՈՒՐ.

A $\frac{I}{8508}$